ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Միասնական սոցիալական ծառայությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ծրագրային փաթեթի ինտեգրացիայի խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով կազմակերպված ՄՍԾ ԳՀԽԾՁԲ-24/16 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024թ. **հունիսի** 17-ին կնքված N ՄՍԾ ԳՀԽԾՁԲ-24/16 պայմանագրում 2024 թվականի **հունիսի** 21-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցելու համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն N 1: Կողմերը որոշեցին Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը:

Փոփոխության հիմնավորում: N 1: Գնումների մասին օրենսդրության և Պայմանագրի 7.5 և 7.13 կետերի համաձայն:

Պատվիրատու՝ ***Միասնական սոցիալական ծառայություն***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2024թ. հունիսի 17-ին կնքված N ՄՍԾ ԳՀԽԾՁԲ-24/16 գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «21» « 06 » 2024թ.

Միասնական սոցիալական ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Արշակյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գագիկ Ալեքսանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև 17/06/2024թ. կնքված N ՄՍԾ ԳՀԽԾՁԲ-24/16 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների կատարման Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է երկու (2) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Միասնական սոցիալական ծառայություն	«Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ
Ք. Երևան, Նալբանդյան 13	ք. Երևան, Շիրակի օք. 2-րդ շենք, բն. 28,
ՀՎՀՀ 02505511	ՀՎՀՀ 02236157
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հայէկոնոմ բանկ Շենգավիթի մասնաճյուղ
Հ/Հ 9000115563 55	Հ/Հ 1630132198 38
(ստորագրություն)	(ստորագրություն)
L.S.	

Հավելված 1
« 17» «հունիսի» 2024թ. կնքված
N ՄՄԾ ԳՀԽԾՁԲ-24/16 գնման պայմանագրի հիման վրա
«21» «06» 2024թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	*գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)*	*անվանումը*	*դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	*փետրվար*	*մարտ*	*ապրիլ*	*մայիս*	*հունիս*	*հուլիս*	*օգոստոս*	*սեպտեմբեր*	*հոկտեմբեր*	*նոյեմբեր*	*դեկտեմբեր*	*ԸՆԴԱՄԵՆԸ*
1	72221200/501	Ծրագրային փաթեթի ինտեգրացիայի խորհրդատվական ծառայություններ	0	0	0	0	0	0	19800000	19800000	19800000	19800000	19800000	19800000	*19800000*

***Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Միասնական սոցիալական ծառայություն
Ք. Երևան, Նալբանդյան 13
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի օք. 2-րդ շենք, բն. 28,
ՀՎՀՀ 02236157
Հայէկոնոմ բանկ Շենգավիթի մասնաճյուղ
Հ/Հ 163018219838

(ստորագրություն)

Կ.Տ.